



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

222-2015

223-2015

224-2015

225-2015

226-2015


227-2015

228-2015

L. M.  
L. M. 2015

pretty much

2/11



by Antene  
1911

451

new

64.

Kutya u 47 vpi

2003

ԿՈՄՄ ԼԵՕՆ ԹՈՒՐԹՈՅ

# ՔՈՐՆԵՅ ՎԱՍԻԼԻԵՖ

( Ա Բ Պ Ա Կ )



Թարգմանեց Թրանսլետեն  
Ա.ՆԴՐԱՆԻԿ Մ. ԿԵՆՃԵԱՆ



Կ. ՊՈԼԻ Ա  
Տպագր. ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ  
1910

Printed In Turkey

ԿՈՄՍ ԼԷՇՆ ԹՈԼՍԹՈՅՑ

891.71

- 90

ԱԿՐ

# ՔՈՐՆԵՑ ՎԱՍԻԼԻԵՖ

( Ա. Բ. Պ. Ա. Կ )



Թարգմանեց Թրանսլեհի  
Ա.ՆԴՐԱՆԻԿ Մ. ԿԵՆՃԵԱՆ



Կ. ՊՈՂԻՄ  
Տպագր. ԵՇՈՒ - ՊՈ.ՊԻՒԵՍՆ  
1910

1312

Printed in Turkey

ԸՆԹԵՐՑՈՂ ՆԵՐՈՒՄ

Աւելորդ յոգնուրիսն մը պիտի շղար Լիօն Թօ-  
ղարօյի մասին խօսի ընկել: Աշխարհածանօթ հեղինակ  
մը՝ որ մասնաբառով վարդապետութեան մըն աղ ոսհ-  
վիրան եղած է:

Թարգմանելով ներկայ վիպակը, Լիօն Թօղարօյի  
գրականութենեն ճաշակ մը տալ եղած է նապատակ,  
միեւնոյն ատեն վասահ շղարով որ այս կերպ դիրքի-  
բռնձելի գրոյնիներն են որ ընթերցասիրութեան զարկ  
կուտան:

Միայ յանձնաւարուրիսն որ ունիմ ընթերցող-  
ներուս, այն է՝ իրական կեանի յարադեպ դրուագնե-  
րով հիւտուած այս վիպակի ընթերցանութեան ատեն  
կանգ առնել երեւն եւ երկարօրէն խորհրդածել հե-  
րոսի կեանի իրեւայացնորդ իւրաժանցիւր փուլերուն  
վրայ, վասնզի առանկով եւեր թէ կարելի պիտի շղ-  
ար հասկնաշ, թէ ներսի կեանի յուզումներով  
ապրիլ վայրկեան մը եւ ոգորիդ մի ժիջ եւ թէ սիրտերու  
մեջ զգաց կամաց կամաց անորոշ խցում մը, որը  
նախակարապետ խցն է եսին դեսի գիտական  
զարքնումը եւ զարգացում:

Ա. Մ. Կէնձեան

Ա.Ս.Ա.Ա.Զ.Ա.Ր., 1910 Մայիս 1/14

A. DEVEJIAN LIBRARY  
NEW YORK  
Ա. ՏէՎԵՋԻԱՆ ԳՐԱՑՈՒՆ





## ՔօՐՆԵՑ ՎԱՍԻԼԻԵՖ

Ա.

Այն օրը որ գիւղ վերադարձաւ, Քօրնէլ Վասիլիէֆ յիսուն և չորս տարեկան էր: Իր գանգուր և խիտ մազերուն մէջ ո՛չ մէկ ճերմակ թել կ'երեւար, միայն ուե մօրուքին մէջ թուշերուն մօտ սկսած էր ճերմակը: Դէմքը կարմիր էր և անխորշոմ. ծոծրակը լայն և ուժեղ. ամբողջ կարչնեղ մարմինը գիրցած էր քաղաքի կեանքին ճոխութեանը մէջ:

Քսան տարի առաջ զինտորական ծառայութիւնը աւարտած և ստակով էր եկած: Նախ խանութ մը բացած էր, բայց յետոյ ձգած՝ արջառի առեւտուրով զբաղելու համար: Զէրքասիա կ'երթար արջառ և ոչխար գնելու, զորս Մոսկուայի մէջ կը վաճառէր:

Կայ աւանը՝ իրենց թիթեղեայ տանիքով քառաշին տան մէջ կ'ապրէին ծեր մայրը, կինը և իր երկու տղաքները (մանչ մը և աղջիկ) ինչպէս նաև իր քեռորդին՝ տասնեհինդ տարեկան համբ որբ մը և ծառայ մը:

Քօրնէյ երկու անգամ ամուսնացած էր: Առաջին կինը՝ տկար և հիւանդու, մեռած էր անզաւակ: Այրի և արդէն տարիքու, բայց մօտակայ գիւղէն աղքատիկ դեռատի աղջկան մը հետ ամուսնացաւ, որը գեղեցիկ էր և առողջ: Ուրեմն տղաքները այս երկրորդ կնոջմէն էին:

Վերջին անգամ բերած ապրանքը՝ այնքան նպաստաւոր կերպով վաճառած էր Քօրնէյ Մոռկուայի մէջ որ չուրջ երեք հագար բուբլիի տիրացած էր: Հայրենակիցէ մը իմացած էր որ ո՛չ շատ հեռի իրենց գիւղէն՝ գործը աւրուած հարուստի մը անտառը աժան գինով կը ծախուէր. որոշեց ուրեմն ատաղձի գործով զբաղիլ: Քօրնէյ իրենց գիւղը երկաթուղիի կայարանը հանողիսկցաւ հայրենակիցի մը, այն է միաշին Քուզմայի, որուն գործն էր ցից մաղերով անճոռնի զոյգ մը գրաստը հետը առած ամէն շողեկառքի գիւղէն դէպի կայարան երթալ ի խնդիր ճամբորդի: Քուզմա աղքատ էր, և այս պատճառաւ հարուստները չէր սիրեր: Քօրնէյը չէր սիրեր և Քօրնիւչքա կը կոչէր:

Քօրնէյ՝ ոչխարենիէ վերարկու մը հագած, պայուսակ մը ձեռքը, կայարան ելաւ և փորը տնկած կամսդ առաւ չնչասպառ շուրջը դիտելով:

Առառ էր. հակառակ սառոյցին՝ օդը մութ էր և քաղցր:

— Ի՞նչ կը սպասես, Քուզմա հօրար, ճամբորդ չունի՞ս, ըստու: Կը տանի՞ս դիս:

— Ի՞նչու չէ: Բուբլի մը տուր տանիմ քեզ:

— Ի՞նչ: Եօթանասուն կոպէկ բաւական է:

— Փորդ գերցուցեր ես և տակաւին խեղճարդու մըն ալ երեսուն կոպէկին աչք ունիս:

— Աղէկ, աղէկ'կ, կը հաւանիմ, ըստ Քօրնէյ:

Պայուսակը կառքին առջեւը դնելով ինքն ալ մէջի նստարանին վրայ նստաւ:

Քուզմա կառքին առջեւը բարձրացաւ:

— Օ՛ն, ուրեմն:

Կառքը կայարանէն դէպի ի դուրս խճուզին ելաւ:

— Է՛յ, նայինք ի՞նչ կայ նոր, գիւղին մէջ. հարցուց Քորնէյ:

— Հը՛, աղէկ' ոչի՞նչ:

— Ի՞նչ կ'ըսես: Մեր պառաւը կ'ապրի՞:

— Պառաւն ալ ողջ է, դեռատի կինդ ալ. գէշ չեն. նոր ծառայ մը ունին:

Եւ Քուզմա խնդաց, ինչ որ քիչ մը տարօրինակ երեւցաւ Քօրնէյի:

— Ի՞նչ ծառայ: Է՛հ, Բիէրը:

— Բիէր հիւանդ է: Էօվսթիկը առին, Քամէնքայէն է, իր գիւղէն, ըստ Քուզմա:

— Հը՛մ. ըրաւ Քօրնէյ:

Երրոր Քօրնէյ՝ Մարֆայի ձեռքը կ'ուզէր, կիները էօվսթիկի մը մասին բաներ մը խօսած էին:

— Ասանկ է, Քօրնէյ Վասիլիէֆ, ըստ Քուզ-

մա : Հիմակուան կիները իրենց գլխուն կը գործեն :  
— Ի՞նչ ընենք . ըստ Քօրնէյ : Զիդ շատ ծերացեր է . աւելցուց , խօսակցութիւնը փոխելու համար :

— Ես ալ երիտասարդ չեմ այլեւս : Տիրոջը պէս է , պատասխանեց Քուղմա , ծուռ՝ կաղ ոտքեր ունեցող ձին մտրակելով :

Կէս ճամբան պանդոկ մը կար : Քօրնէյ հրամայեց կանգ առնել և պանդոկ մտաւ : Քուղմա՝ ձին պարապ մսուրին դարձուց և փոկերը շտկեց առանց Քօրնէյի նայելու , սպասելով որ Քօրնէյ հրամցնէ իրեն :

Քօրնէյ գաւիթը ելնելով ,

— Օ՛ն ուրեմն , Քուղմա հօբար , եկուր գաւաթ մը կոնծէ , ըստ :

— Ի՞նչ կայ . աւելցուց Քուղմա , աճապարած չըլլալ ձեւացնելու համար :

Քօրնէյ օղի ապսարեց և Քուղմային հրամցուց : Քուղմա առտուընէ ի վեր ճաշած չըլլալուն՝ շուտով գինովցաւ և իսկոյն Քօրնէյի մօաննալով՝ ցածրով՝ սկսաւ անոր պատմել գիւղի չարախօսութիւնները :

Գիւղը կը խօսուէր թէ Մարֆա , անոր կինը , իր հին սիրահարը իբր ծառայ առած էր և թէ անոր հետ կ'ապրէր :

— Ինծի ի՞նչ . քու վրադ կը խղճամ , ըստ Քուղմա գրգռուած , միայն թէ լաւ չէ , մարդիկ կը ծաղրեն : Արդարեւ անոնք մեղքէն չեն վախնար . . . : Է՛յ , ըսի , սպասեցէք . ի՞նքը պիտի

դայ . . . Ահա այսպէս . սիրելիս Քօրնէյ Վասիլիկ-վիչ :

Քօրնէյ լուս մտիկ կ'ընէր Քուղմայի ըստածները և իր թանձր յօնքերը հետզհետէ աւելի վար կ'իջնային ածուլսի պէս սև՝ փայլուն աչքերուն վրայ :

— Պիտի խմե՞ս տակաւին , հարցուց երբոր շիշը պարպուեցաւ : Ո՞չ : Մեկնինք ուրեմն :

Վճարեց հաշիւը և ճամբուն վրայ ելաւ :

Դիշերը սկսելուն տուն հասաւ : Առաջին անձը՝ որ հանդիպեցաւ նոյն ինքն էօվաթիկը եղաւ , որուն վրայ խորհելէ չէր կրցած դադրիլ ամբողջ ճամբուն տեւողութեանը : Քօրնէյ բարեւեց անոր : Էօվաթիկի տեղոյն՝ խարտեաչ՝ նուրբ դէմքը տեսնելով , Քօրնէյ մինակ գլուխը երեցուց զարմացումով . «Սակայն , ով գիտէ . . . : Բայց և այնպէս հիմա պիտի իմանամ» :

Քուղմա ձիերուն մօտ կեցած՝ իր միակ աչքը կը թարթէր :

— Ուրեմն մեր տա՞ւնը կը կենաս . հարցուց անոր Քօրնէյ :

— Էյ , հարկաւ տեղ մը աշխատելու է , պատասխանեց :

— Սենեակը տա՞ք է :

— Ի հարկէ . Մարֆա Մաթլէյէվսան հոն է , պատասխանեց էօվաթիկ :

Քօրնէյ գաւիթէն անցաւ : Մարֆա՝ ձայներու աղմուկէն գուրս ելաւ : Ամուսինը տեսնելուն՝ կար-

մըրեցաւ, և աճապարեց ընդունիլ մասնաւոր գուրդուրանիքով մը :

— Ես ալ, մայրիկն ալ քեզի սպասելէ դադրած էինք, ըստ և Քօրնէյին նսեւէն սենեակ գնաց :

— Նայինք, ի՞նչպէս ապրեցաք բացակայութեանս :

— Ամէն ատենաւոն պէս, ըստ Մարֆա : Եւ գրկելով երկու տարեկան աղջնակը՝ որ քղանցքէն կը քաշէր և կաթ կ'ուղէր, ամուր քայլերով դուրս ելաւ :

Քօրնէյ մայրը՝ տղուն պէս սեւաչուի, թեթև մուձակներու մէջ ոտքերը քաշկրտելով, սենեակ մտաւ :

— Շնորհակալ ենք որ մեզ տեսնելու եկար, ըստ գլուխը երերցնելով :

Քօրնէյ պատմեց դպրուն պատճառը, բայց յիշելով Քուզման, դուրս ելաւ վճարելու : Գաւ վիթի դուռը բացած ատեն, բակին մէջ՝ ճիշտ իր դիմացը նշմարեց Մարֆան և Էօվաթիկը : Իրարուշատ մօտիկ կեցած էին, և Մարֆան բան մը կ'ըսէր : Էօվաթիկ՝ Քօրնէյը նշմարելով հեռացաւ, իսկ Մարֆան սամավարին մօտ գնաց, որուն խողովակը կը չչար :

Քօրնէյ անցաւ լուռ, կնոջը ծռած քամակէն և պայտասակը առնելով՝ հրաւիրեց Քուզման որ սենեակ գայ թէյ առնելու :

Թէյէն առաջ, Քօրնէյ՝ Մոսկուայէն բերած նուերները բաժնեց իրեններուն . մօրը՝ բրդեայ ցիսի մը, Ֆէդկային՝ պատկերներու գիրք մը, իր

համբ քեռորդւոյն՝ բաճկոն մը, կնոջը՝ շրջադգեստ ցոււ մը :

Թէյի ատեն՝ Քօրնէյ նստած կը մնար, յօնքերը պոստած և լուռ, ատեն ատեն՝ շրթունքներուն ծայրովը ժպտելով երբ համբին նայէր, որուն ուրախութենէն կը զբօնսուին ամէնքը : Համբը ստուգիւ չէր կրնար կշտանալ բաճկոնէն : Անդադար կը ծալէր, կը քակէր, կը փորձէր, Քօրնէյի համբոյրներ կը խրկէր և կը խնդար :

Թէյն ու ընթրիքը աւարտելուն պէս, Քօրնէյ գնաց այն յարկաբաժինը ուր կը պառկէր Մարֆայի հետ և իրենց պղափկ աղջիկը :

Սեղանի անօթները կարգի դնելու համար . Մարֆա մեծ սենեակին մէջ մնաց : Քօրնէյ՝ մինակը սեղանին առջեւ նստած՝ արմուկներովը կրթնեցաւ և սպասեց : Կնոջը դէմ զգացած բարկութիւնը երթալով աւելի կ'եռեւեփէր իր ներար : Ծոցէն տեարակը հանեց և սկսաւ իր հաշիւները ընել գաղափարները փափոխելու համար : Հաշիւը կը շարունակէր, ատեն ատեն մուտքի կողմը նայելով և մեծ սենեակին մէջ քայլերուն ականջ դնելով : Քանի մը անդամ դրան բացուիլ գոցուիլը լսեց, գաւկիթէն մէկը անցաւ, բայց Մարֆան չէր : Վերջապէս անոր ոսնածայնը ձանցաւ : Դուռը երերաց, բացուեցաւ և Մարֆա՝ վարդաթոյր և գեղեցիկ, կարմիր պերոզով ներս մտաւ փաքրիկ աղջիկը գրկած :

— Յոգնած ես ճամբորդութենէդ, չէ՞ . ըստ ժպտելով, իր թէ անոր մոայլ դէմքը չէր նշմարած :

Քօրնէյ առանց պատասխանելու նայեցաւ առոր և սկսաւ հաշուել, թէեւ այլ եւս ոչինչ մնացած էր հաշուելու:

— Սրդէն ուշ է, ըստու կինը՝ աղջիկը գետին դնելով:

Մարֆա բարավանին ետեւը անցաւ: Քօրնէյ լսեց անկողինին շակուփիլը և տղան պառկեցնելը:

Քուզմայի այն խօսքերը, «մարդիկ կը ծաղրեն» միտքը ինկան: «Կեցի՛ր քիչ մը» մտածեց դժուառաւ շունչ առնելով, և յամրաշարժ ոտքի ելաւ, իր պղտիկ մատիտը բաճկոնին գրականը դրաւ, հաշուետախտակն ալ պատը կախեց և անկողնոցին մօտեցաւ:

Մարֆա ոտքի կեցած էր, դէմքը սրբոց պատշերներուն՝ և կ'ալօթիր: Քօրնէյ կանգ առաւ և սպասեց: Մարֆա երկար ատեն խաչակնքուելով աղօթքները կը կարդար կիսաձայն:

Քօրնէյի այնպէս կը թուէր որ շատոնց աղօթքները աւարտած էին և դիտմամբ կը կրկնէր այլեւս: Վերջապէս մինչեւ գետին խոնարհեցաւ, շտկուեցաւ, քանի մը բառ ալ մրմռաց և դէմքը դէպի Քօրնէյ դարձուց:

— Մեր փոքրիկ Ալաֆիին կը քնանայ արդէն, ըստ Մարֆա աղջնակը մատնանչելով:

Եւ ժպտուն նստաւ անկողնին վրայ որ կը ձռնէր:

— Երկար ատենէ՞ ի վեր առւնն է միթէ էօվ վրսթիկը. հարցուց Քօրնէյ անկողնոցէն ներս մտնելով:

Հանդարտ շարժուձեւով մը Մարֆա՝ իր մազի թանձր հիւսուածքներէն մէկը կուրծքին վրայ քաշեց և մատներու արագ շարժումով մը սկսաւ քաշկել հիւսքը: Քօրնէյի երեսին կը նայէր և աչքերը կը ժպտէին:

— Էօվսթիկը: Զեմ գիտեր, երկու երեք շաբաթ գրեթէ:

— Իրա՞ւ է որ անոր հետ կ'ապրիս. յարեց Քօրնէյ:

Մարֆա մազի հիւսուածքը ձեռքէն վար ձգեց, բայց իսկոյն կրկին ձեռք առնելով իր թանձր և կարծր մազերը սկսաւ հիւսել:

— Ինչե՛ր կը հսարեն: Ե՛ս, Էօվսթիկի հետ ապրի՞մ, յարեց, Էօվսթիկ անունը մասնաւոր շեշտով մը արտասահնելով. — Ա՛ռ քեզի զրպարտութիւնները: Ո՞վ ըստ ատիկա:

— Բաէ՛: Իրա՞ւ է կամ ոչ, աւելցուց Քօրնէյ, իր լայն բոռնցքները սեղմելով գրալաններուն մէջ:

— Հերիք այդ յիմարութիւնները: Կ'ուզե՞ս որ կօշիկներդ քաշեմ:

— Պատասխան տո՛ւր իմ հարցումիս:

— Ա՛ռ քեզի գիւտ մը, Էօվսթիկ, յարեց Մարֆա: Ե՛ս, ո՞վ պատմեց քեզ այդ սուտերը:

— Ի՞նչ կ'ըսէիր անոր գաւիթը:

— Ի՞նչ կ'ըսէիր անոր: Կ'ըսէիր որ տակառին նոր շրջանակ մը անցնելու է: Բայց ի՞նչ ունիս ինձի հետ:

— Կ'ուզեմ որ ճշմարտութիւնը ըսես: Պիտի սպաննեմ քեզ, նենդաւոր:

Կնոջը մազի հիւսքէն բռնեց :  
 Մարֆա անոր ձեռքերէն քաշեց հանեց մա-  
 զերը, դէմքը ցաւէն գալարուն :  
 — Ծեծի արժանի ես դուն : Ի՞նչ հաճոյք ու-  
 նիմ քու մօտ : Այսպիսի կեանք մը, չեմ զիտեր  
 ի՞նչ կարելի է ընել ...  
 — Ի՞նչ պիտի ընես . պոռաց դէպի կինը յա-  
 ռաջանալով :  
 — Ի՞նչու համար մազերուս կէսը փրցուցիր :  
 Ահա փունջ փունջ կը թափի : Ի՞նչ ունիս հետո :  
 Իրաւ է որ ...  
 Մարֆա խօսքը չմնցուց : Քօրնէյ անոր բազու-  
 կէն բռնելով անկողնէն վար քաշեց և սկսաւ  
 հարուածել կողերուն և կուրծքին վրայ :  
 Քանի կը ծեծէր, այնքան աւելի բարկու-  
 թիւնը կը գրգռուէր : Կինը կը պոռար, կը տապար-  
 արկէր, փախչիլ կը ջանար բայց Քօրնէյ բռնածը  
 չէր թողուր :

Տղան՝ արթննալով, դէպի մազը նետուեցաւ :  
 — Մայրի'կ, մայրի'կ, ճչաց :  
 Քօրնէյ աղջկանը բազուկէն բռնեց, մօրմէն  
 անջատեց և կատուի ձագի մը պէս՝ անկիւն մը  
 նետեց : Աղջնակը սուր ճիշեր արձակեց, յետոյ,  
 քանի մը վայրկեան ետք ձայնը չսուեցաւ այլեւ :  
 — Զարագործ, սպաննեցիր զանի, պոռաց  
 Մարֆա և ուզեց դէպի իր զաւակը երթալ :

Բայց Քօրնէյ կրկին բռնելով, կուրծքին այն-  
 քան ուժգին հարուած մը տուաւ որ Մարֆա ին-  
 կաւ և յանկարծ ձայնը կտրեցաւ :

Այլեւ մինակ աղջիկն էր յուսահատօրէն ճչա-  
 ցողը :  
 Պառաւ մայրը առանց պերողի, ճերմակ մա-  
 զերը խառնի խուռն, գլուխը դողդոջուն անկող-  
 նոցը մտաւ :  
 Առանց Քօրնէյի՝ ո՛չ ալ Մարֆայի վրայ  
 նայելու մօտեցաւ տղային, որ յուսահատ՝ ողբա-  
 գին ճիշեր կը հանէր, և խաղաղեցուց :  
 Քօրնէյ ոտքի կանգնած՝ դժուարաւ կը չնչէր  
 ու բոլսրափքը կը նայէր քունէն նոր արթնցողի  
 մը պէս որ չէր զիտեր ուր գտնուիլը և ոչ ալ  
 անցուղարձը :  
 Մարֆա գլուխը վերցուց և հեծեծելով իր ա-  
 րիւնոտած դէմքը սրբեց շապիկին ծայրովը :  
 — Անիծեալ, աւաղա'կ : Այո՛, էօվաթիկի  
 հետ կ'ապրիմ և անցեալին մէջ ալ կենակցած եմ  
 անոր հետ : Ահա՛ . Ակաֆիան ալ քեզմէ չէ . անոր  
 աղջիկն է . յայտարարեց արագօրէն :

Ու միւս կողմէ ձեռքերը վեր բարձրացուց  
 դիմագրելու համար գալիք հարուածներուն :

Բայց Քօրնէյ, իբր թէ հասկցած չըլլար, ա-  
 ռանց պատասխան տալու մրմռաց :

— Տես թէ ի՞նչ ըրիր պզտիկին . խեղճին բա-  
 զուկը տեղէն խախտեցիր . ըսաւ պառաւը, ցցու-  
 նելով կախուած անշարժ ձեռքը աղուն որ կը շա-  
 րունակէր՝ լալ և ճչալ :

Քօրնէյ անդին դառնալով դուրս ելաւ :  
 Օդը միշտ ցուրտ էր և մռայլ : Թեթև սա-  
 ռոյցի մանրուածքներ կը թափէին մարդուն այ-

բող ճակատին և այտերուն վրայ ։ Սանդուղին վրայ նստաւ և վանդակապատին վրային բուռովը ձիւն առնելով սկսաւ ուտել :

Դրան մէջին Մարֆայի ողբերը և տղուն աղիողորմ ճիշերը կը լսէր :

Վերջապէս ոտքի ելնելով սրահը մտաւ : Սեղանին վրայ ճրագը կը պլալար մինչ անդին բարավանին ետեւը ողբերը կը կրկնապատկուէին : Հագուեցաւ, նստարանին ներքեւ զետելուած պայուսակը քաշեց, անոր մէջ տեղաւորեց իր պէտքերը և պարանով մը կապեց բոլորտիքը :

— Ինչո՞ւ խոշտանգեցիր զիս : Ինչո՞ւ : Ի՞նչ ըրի ես քեզի, սկսաւ կոծել Մարփա կողկողագին :

Քօրնէյ առանց պատասխանելու պայուսակն առնելով դէպի դուռը ուղղուեցաւ :

— Թիսպարտ : Աւազակ : Կեցի՛ր : Կը կարծես որ դատաւոր չկա՞յ քեզի համար, պոռաց Մարփա տարբեր ձայնով մը և բարկութեամբ :

Քօրնէյ առանց պատասխանելու ոտքովը դուռը հրեց այսպէս ուժգին որ պատերը դողացին :


Տնակին միւս յարկը անցաւ, համրը արթընցուց և հրամայեց որ ձին լծէ : Համրը մէկ անգամէն չարթնցաւ : Զարմացած՝ իր քեռիին կը նայէր և երկու ձեռքերովը գլուխը կը քերէր : Երբոր վերջապէս հասկցաւ թէ ինչ կը պահանջուէր իրմէ, շուտով ցատկեց, իր մուճակները և պատրատած վերաբիու մը հագաւ և ճրագը առնելով բակը ելաւ :

Արդէն բոլորովին լուցած էր երբոր Քօրնէյ մեկնեցաւ, սոյլակով այն ճամրէն, ուսկից

դեռ իրկունը անցած էր Քուզմայի հետ : Շողեկառքին մեկնելէն հինգ վայրկեան առաջ կայարան հստաւ : Համրը՝ տեսաւ անոր տոմսակ մ'առնելով պայուսակն ալ միասին վակօն մտնելը ուսկից գլուխով մնաք բարեկ նշան ալ ըրած էր իրեն, և շոգեկառքը մեկնած :

Մարփայի՝ դէմքին վրայ սկրդուքներէն զատ երկու կողերն ալ կոտրած էին և գլուխը ճեղքուած : Բայց, առողջ ուժեղ և դեռատի ըլլալուն, մէկ ամիս յետոյ բուժուած էր, առանց ո'ւե մէկ ամիս յարուածներէն : Ընդհակառակը, հետք կրելու հարուածներէն : Պայմանագրիկ աղջիկը՝ կեանքին մինչև վերջը հաշմանդամ էր, բազուկին երկու ոսկիները կոտրած և լաւ բուժուած չըլլալուն : Գալով Քօրնէյի՝ մեկնելէն ի վեր ո'չ մէկ լուր ունեցող կար : Մինչեւ իսկ չէր գիտցուեր թէ ողջ է կամ մեռած :

10/39  
2/22/2015



Բ.

Տասնեեօթը տարի անցած էր : Աշնան իրկուն մը, արեւը մարը կը մանէր . գիշերը սկսած էր և ժամը դեռ չորս չկար : Հօտը Անտրէիէվայի գիւղը կը վերադառնար : Հօլիւը՝ իր պարտաւորութիւնը աւարտած ըլլալով, վերջին ուտիքի նախօրեակին մեկնած էր հանկէ, որով կիները և տղաքները կարգով խաչնարածի դեր կը կատարէին :

Հօտը դաշտերէն բնութակած էր դէպի աղտոտ Քօրնէյ Վասիլիկ:

Քակտուած սրղուան՝ դիւզ վերադառնալու համար  
բառաջնելով և մայելով :

Դուարին առջեւէն՝ ճամբուն վրայ բարձրահաւ-  
սակ ծերունի մը կ'երեւէր գանգուր մաղերն ու մօ-  
րուքը ճերմիած . մինակ թանձր յօնքերը ու եին :  
Անձեւէն գունաթափ եղած՝ գլուեակ վերարկու մը  
հագած էր և բարձր գտակ կը կրէր ան , որուն կոր  
քամակն ի վար կախուած է կաշիէ պայուսակ մը :  
Դժուարաւ կ'ընթանար ան քարչ աւալով ցեխին մէջ  
իր անձեւ թրջած՝ կրունկները կոտրած ունաման-  
ները , և ամէն մէկ քայլին՝ կաղնեփայտէ անթա-  
ցուալին կը կրմնէր : Երբոր հօտը հասաւ ետեւէն ,  
կանգ առաւ մարդք :

Հօտը քշող երիտասարդ կինը՝ գլուխը պերո-  
գով ծածկած էր և շրջազդեստին քղանցքը մէջքին  
փաթթած : Երիկ մարդու կօշիկներ հագած էր ան  
և արագաշարժ՝ ճամբուն մերթ այս մերթ այն կող-  
մը կ'անցնէր յետամնաց գառնուկներն ու խողերը  
քշելով : Երբոր ծերուկին մօտ հասաւ , կանգ առ-  
նելով քաղցր՝ հնչուն և գիրգ ձայնով մը .

— Բարե , Մեծ-Հայր , ըստ :

— Բարե՛ւ , աղջիկս , պատասխանեց ծերուկը :

— Պառկելիք ա՞եղ կը փնտուես :

— Տեսնենք , ըստ ծերունին խեղդուկ ձայ-  
նով մը :

— Է՞ն , Մեծ-Հայ՛ր , յարեց անուշ ձայնով մը  
դեռատի կինը , շիփ շիտակ մեր տունը գնա՛ ուրե-  
մըն : Ճամբուն վրայ երրորդ տնակն է . կեսուրս  
սիրայօժար կը հիւրընկալէ գիշերը ասանկ բոլոր  
ուղեւորները :

— Երրորդ տնա՞կը : Ուրեմն Զինովիէվէնց  
տնա՞կն է , ըստ ծերունին աչքերը թարթելով լըր-  
ջադէմ :

— Կը ճանչնա՞ս ըսել է անոնք :

— Անգամ մըն ալ եկած եմ :

— Թէտուչկա՛ , ի՞նչ բերանդ բացեր կը նայիս :  
Կաղ գառնուկը՝ բոլորսին ետ մնացեր է . չնայի՞ս :

Աջ ձեռոքի գաւազանը երերջնելով և ձախ ձեռ-  
քոյն ալ գլուխը ծածկող պերովը ձախլիկ կերպով  
մը բոնելով , գեռատի կինը վաղեց ու գառնուկին  
ետեւէն որ շատ ետեւօք կը կաղար :

Ծերունին՝ Քօրնէն էր : Դեռատի կինը՝ նոյն  
ինքն Սկաֆիան էր որուն բազուկը կոտրած էր  
տասնեւեօթ տարի առաջ : Սկաֆիա իրենց գիւղէն  
չորս վերսթ հեռաւորութիւն ունեցող Անտրէիէվքա  
գիւղին հարուստ մէկ ընտանիքին հարս գացած էր :

\* \* \*

Քօրնէյ Վասիլիէֆ , այն խրոխստ՝ հարուստ մար-  
դը , այն կարչնեղ մարդը՝ այլեւս տկար , չքառոր  
ծերունի մըն էր , որ հագած զգեստէն՝ զինուորի  
տոմսէն և պայտասակին մէջ երկու շապիկէ զատ  
ուրիշ ոչինչ ունէր :

Բոլոր այս փափախութիւնները քիչ քիչ տեղի  
ունեցած էին , այնովէս որ ինքն ալ չէր կարող ըսել  
թէ երբ սկսած էր և ո՛չ ալ ինչպէս պատահած :  
Միակ գիտցածը , որուն հաստատապէս համոզուած  
էր , այն էր որ իր նենդառոր կինը բոլոր իր դժբաղ-  
տութեանց պատճառն էր :

Կնոջմէն բաժնուելով , շիտակ անտառը ծախող

սեփհականատիրոջ դացած էր։ Զէր կրցած գնել,  
արդէն ծախուած ըլլալուն։ Ուրեմն Մոսկուա վե-  
րադառնալով սկսած էր ինքզինքը արբեցութեան  
տալ։ Առաջ ալ կ'արբենար, բայց այս անգամ աճ-  
բողջ երկու շաբաթ գինովութենէ չսթափեցաւ  
բնաւ. գինովութիւնն անցնելէ ետք, Վոլկա մեկ-  
նեցաւ արջառ փնտուելու։ Գնումը աննապաստ  
եղաւ. Երկրորդ անգամ ալ հոն գնաց, բայց այս  
երկրորդ գնումն ալ չյաջողեցաւ. Վերջապէս մէկ  
տարի յետոյ՝ երեք հազար բուրլիէն հազիւ քսան և  
հինգ բուրլին մնացած էր։ Գործաւոր ըլլալու հար-  
կադրուեցաւ։ Առաջ ալ կը խմէր, և հետզհետէ ա՛լ  
աւելի շատցուց այլ ես։

Նախ և առաջ տարի մը՝ արջառի վաճառակա-  
նի մը քով վերակացու կեցաւ, բայց արբեցութեանը  
համար վանառեցաւ։

Յետոյ, ծանօթներու շնորհիւ գինեվաճառի մը  
մօտ մտաւ, բայց ասիկա ալ երկար ատեն չաեւեց.  
հաշիւները սխալ ընելուն՝ հոնկէ ալ ճամբուեցաւ։  
Հայրենի տունը վերադառնալ, բայց ամօթապարտ  
պիտի մնար։ «Իմ բացակայութեանս միշտ կե-  
նակցեր են անոնք։ Թերեւս մանչ զաւակն ալ  
ինձմէ չէ»։ կը խորհէր։

Հետզհետէ գործը աւելի կը վատթարանար։  
Գինարբուքէն չկրնալով հրաժարիլ, արջառի պա-  
հապան եղաւ։ Բայց քիչ ետք ո՛չ իսկ ատանկ  
գործ կրցաւ գտնել։

Քանի վիճակը կը խեղճնար, այնքան աւելի  
յանցապարտ կը գտնէր իր կինը և երթալով բար-  
կութիւնը կ'աճէր անոր դէմ։

Քօրնէյի վերջին գործը եղաւ անասունի պա-  
հապանութիւն անծանօթ մէկու մը քով։ Անասուն-  
ները հիւանդացան, որուն մէջ Քօրնէյ ո՛ւեէ յան-  
ցանք չունենալով հանգերձ ճամբուեցաւ։

Քօրնէյ որոշեց ճամբայ ելնել։ Լաւ պայուսակ  
մը՝ շաքար և կօշիկներ ճարեց, ութ բուպլի ունէր  
և Քիէվ մեկնեցաւ։

Զանձրանալով հոն, գէպի կովկաս ճամբու ին-  
կաւ։ Ճամբան հիւանդացաւ. չափազանց ակարա-  
ցած էր. հազիւ մէկ բուպլի եօթանասուն կոպէկը  
մնացած էր և հոն ոչ մէկ անձ կը ճանչնար։ Որոշեց  
տուն վերադառնալ իրենց գիւղը։

«Թերեւս մեռած է խարերան, իսկ եթէ դեռ  
ողջ ըլլայ, գոնէ մեռնելէ առաջ պիտի յայտնեմ ի-  
րեն ամեն բան. թող գիւնայ շնացող կինս թէ զիս  
ի՞նչ վիճակի հասցուց.» մտածեց և գիւղին ճամ-  
բան ձեռք առաւ։

Տենդէ տառապելուն օր օրի կը տկարանար,  
այնպէս որ օրտկան տասը տասնեհինգ վերսթէն  
աւելի չէր կարող ճամբայ կտրել։ Իրենց գիւղին  
երկու հարիւր վերսթ մնացած, այլ ես ոչ իսկ կո-  
պէկ մը ունէր։ Յանուն Քրիստոսի մուրալով շա-  
րունակեց ճամբան։ «Զիս այս վիճակին հասցնե-  
լուդ համար ուրախացի՛ր» կը մտածէր։

Հիւանդ հիւանդ երկու շաբաթէն հազիւ կրցաւ  
այդ երկու հարիւր վէրսթ ճամբան առնել և հասաւ  
այն տեղը ուր հանգիպած էր Ակաֆիային, զոր աղ-  
ջիկը չէր համարեր և որուն բազուկը կոտրած էր  
ատենօք։

## Գ.

Ակաֆիայի պատուէրին համաձայն, Զինօվիէլի  
տունը համնելուն՝ գիշերը հոն անցնելու թոյլառու-  
ութիւն խնդրեց :

Տնակէն ներս մտած ատեն՝ սովորութեանը հա-  
մաձայն խաչակնքեց սրբոց պատկերներուն առջին  
և յետոյ անեցիները բարեւեց :

— Սառեր ես, Մեծ-Հայր! Գնա՛, գնա՛ վառա-  
րանին մօտ, ըսաւ տանտիրուհին՝ շատ զուարթ  
թոմթոկած պառաւ մը, որ սեղանը կը պատրաստէր :

Ակաֆիայի ամուսինը՝ երիտասարդ գիւղացի՝  
որ սեղանին մօտ նստած ճրագը կը լեցնէր,

— Այդ ո՛րչափ թրջեր ես, ըսաւ, բայց ի՞նչ  
արած, վրագ չորցնելու ես :

Քօրնէյ կօշիկները հանեց, քակուեցաւ և թու-  
նիրին վրայ ելաւ :

Ակաֆիա՝ ոչխարներն ու արջառը տեղաւորելէ  
եաք լեցուն սափոր մը կաթ բերած ներս մտաւ և

— Միթէ ծեր ուղեւոր մը չեկա՞ւ, հարցուց,  
հոս գալու խորհուրդ առւած էի իրեն :

— Հոն է, ըսաւ ամուսինը, թոնիրը ցցունելով  
ուր նստած էր Քօրնէյ և իր մազոտ, նիհար սրունք-  
ները կը շվէր :

Տնեցիք՝ թէյի ատեն Քօրնէյն ալ հրաւիրեցին:  
Քօրնէյ վար ի՞նսալով նստարանին ծայրիկը նստաւ:  
Գաւաթ՝ մը թէյ և շաքար տուին անոր :

Խօսակցութիւնը օդին և հունձքին վրայ կը

դառնար. ցորենը լաւ չէր այն տարի, կամեփը ար-  
տերուն մէջ կը փատէր անձրեւներուն պատճառաւ:  
Քօրնէյ պատմեց թէ ճամբան՝ կամեփով լեցուն  
արտեր տեսած էր:

Դեռասի կինը՝ հազիւ գեղնորակ, թոյլ թէյի  
գաւաթ մըն ալ լեցուց հինգերորդ անգամ ըլլալով  
և հրամցուց Քօրնէյի:

— Բան մը չէ՛, ա՛ռ հայրի՛կ, կենացդ խմէ՛,  
կ'ըսէր տեսնելով որ կը մերժէ:

Զգուշութեամբ առնելով լեցուն գաւաթը՝

— Ինչո՞ւ համար ձեռքդ շիտակ չէ, հարցուց  
անոր Քօրնէյ:

— Տղայութեանը ատեն՝ ձեռքը կոտրեցին:  
Հայրը սպաննել ուղեց մեր Ակաֆիան, պատասխա-  
նեց շատախօս պառաւ մայրը:

— Է՛հ, ի՞նչ պատճառաւ, հարցուց: Եւ դե-  
ռասի կնոջ դէմքը գիտելով, յանկարծ՝ միտոքը ին-  
կաւ իօվսթիկը իր կապոյտ աչերովը և թէյը բռնած  
ձեռքը այնքան ուժգին գողաց որ թէյին կէսը թա-  
փեցու:

— Մեր գիւղը՝ Կայի մէջ, բռնաւոր մարդ մը  
կար, Ակաֆիայի հայրը՝ որ Քօրնէյ Վասիլիէֆ կը  
կոչուէր: Հարուստ մարդ մըն էր: Օր մը՝ այնպէս  
մը բարկացաւ կնոջը դէմ՝ որ զանի գետինը զար-  
կաւ, և ատիկա բաւական չէր, աղջիկն ալ հաշման-  
դամ ըրաւ:

Քօրնէյ լուռ կը մնար, իր սե յօնքերուն տա-  
կէն նայելով մերթ Ակաֆիային մերթ անոր ամուս-  
նոյն:

— Ե՞ն, պատճառն ի՞նչ էր, հարցուց կրկին,  
շաքարին կտորը խածնելով :

— Ո՞վ գիտէ . յարեց պառաւը : Մենք կինե-  
րըս, ամենքս ալ շատախօս կ'ըլլանք, պէտք է որ  
մենք պատասխանենք : Պատճառը ծառայն էր,  
մեր գիւղէն լաւ աշխատաւոր մը՝ որ մեր տունը  
մնաց մինչեւ մահուան օրը :

— Մեռա՞ւ . հարցուց Քօրնէյ և հազաց :

— Շատոնց մեռած է . . . Այս դեռատի հարաբ  
անոնցմէ առինք : Շատ աղէկ կ'ապրէին : Գիւղին  
ամբոխն ունեւոր մաշղիկն էին անոնք ատենօք :

— Ե՞ն, մարդն ի՞նչ եղաւ, հարցուց Քօրնէյ :

— Հարկաւ ան ալ մեռած ըլլալու է : Ի՞նքը-  
զինքը գինարբուքի զարկած էր . արդէն տասն և  
հինգ տարի մը կ'ընէ :

— Աւելի կ'ընէ . մայրս ողատմած է ինձի :

— Ե՞ն, ոի պահած չե՞ս անոր դէմ, ձեռքիդ  
համար . . . հարցուց Քօրնէյ :

— Բայց միթէ օտարակախն մըն էր ան . Հայրս  
էր : Օ՞ն, խմէ՛ որ տաքնաս . կ'ուզե՞ս :

Քօրնէյ չպատասխանեց և սկսու հեծկլտալ :

— Ի՞նչ ունիս :

— Ոչի՞նչ, սանկ : Քրիստոս պահապան ըլլայ  
ձեզ :

Եւ դողդուն ձեռքերովը բազրիքէն բռնե-  
լով թոնիրին վրայ ելաւ :

— Տարօրինակ բան, ըստ պառաւը իր տղուն  
ցցունելով ծերունի ուղեւորը :

—————

## Դ.

Յաջորդ առտուն ամենէն առաջ ելաւ Քօրնէյ ,  
վար իջաւ թոնիրէն , կոչիկին չորցած լաթերը շփեց  
և շատ դժուարութեամբ հագնելով , պայտսակը  
առաւ . . .

— Ի՞նչ կայ, հայրիկ, աւելի լաւ է որ նա-  
խաճաշի սպասես , ըստ պառաւը :

— Շնորհակալ եմ . կ'երթամ :

— Ուրեմն գոնէ երէկուան հացերը ա՛ռ , կե-  
ցիր , պայտսակիդ մէջ գնեմ :

Քօրնէյ շնորհակալութիւն յատանեց և հրա-  
ժեշտ առաւ :

— Երբոր նորէն անցնիս այս կողմերէն , մեզի  
եկուր , եթէ չուած չըլլանք այս աշխարհէն :

Աշնան թանձր մատախուղ մը թէկ ծածկած  
էր ամէն բան , բայց Քօրնէյ ճամբան գիտէր , իր  
բոլոր ելեւէջներովը , անտառ և ճերմակ ուռենի-  
ներովը՝ աջէն ու ձախէն , որչափ որ տասնըեօթը  
տարիէ ի վեր փոփոխութիւններ ալ կրած ըլլային ,  
հիներուն աեղ նորեր բուսած և այն ատենուան  
նորերն ալ ծերացած ըլլալով :

Կայ գիւղը նոյնն էր , մինակ թէ գիւղ մըտ-  
նելու ճամբուն վրայ նոր տուններ շինուած էին :  
Փայտաշէն քանի մը անակներու տեղ ալ քարա-  
շէններ աւելցած էին : Իրենց քարէ տունը քիչ մը  
հինցած էր . տանիքը՝ շատոնց ի վեր յարդարում  
տեսած չըլլալուն , անկիւններէն քարեր թափած  
էին և վերնագաւթակը կքած :

իր հին բնակարանին մօտեցած ատեն, ճռնչող դուռներուն ետեւէն մատակ ձի մը իր մտրուկին հետ ինչպէս նաև մոխրագոյն ձի մը դուրս ելան: Մոխրագոյն ձին՝ ճիշտ նմանութիւնն ունէր այն մատակ ձիին, որը մեկնելէն տարի մը առաջ տօնավաճառէն բերած էր: «Հաւանականաբար նոյն ան ձին էր: Միեւնոյն դաւակը, միեւնոյն լայն կուրծքը և մազոտ ոտքերը» մտածեց: Սեւ աչուփ մանչուկ մը որ նոր սահմաման մը հագած էր, ձիւ երը կը վարէր: «Հաւանականաբար թոռը, Թէտկայի թոռը: Ճիշտ ու ճիշտ անոր սև աչքերը» մտածեց Քօրնէյ:

Մանչուկը՝ անծանօթ ծերունիին նայեցաւ և ցեխին մէջ ցատկուզ մտրուկին ետեւէն վաղեց: Մանչուկին ետեւէն սև չուն մըն ալ ցատկեց, նման իր երեմնի շունին:

«Սրդեօք ի՞մ չունս է» մտածեց, բայց յիշեց որ արդէն քսան տարուան խնդիր էր:

Վերնագաւաթակին մօտենալով, դժուարութեամբ վեր ելաւ այն սանդուզէն, որուն վրայ նստած էր բազրիքին վրայէ ձիւն ուտելու համար: Դուռը բացաւ:

— Ինչո՞ւ բան մը չըսած ներս կը մանես, հարցուց կնոջ ձայն մը մնակին մէջէն:

Զայնը ճանչցաւ. և իսկոյն կինը — իր կինը — վտիս՝ թոմթուկած ծերացած երեւցաւ:

Քօրնէյ կը սպասէր տեսնել այն դեռատի՝ գեղցիկ Մարփան՝ որ մեզանչած էր և զոր ինքը կ'ատէր ու կ'ուզէր կշտամբել, ու յանկարծ անոր տեղ պառաւ մը կը տեսնէր ահա առջին:

— Եթէ ողորմութիւն է, պատուհանին տակէն կ'ուզեն, յարեց ճողած ձայնով մը:

— Ողորմութիւն չէ, ըստ Քօրնէյ:

Յանկարծ կեցաւ կինը: Քօրնէյ անոր դէմքէն հասկցաւ որ ճանչցած էր զինքը:

— Հոս պակաս չեն քեզի պէս մուրացիկներ: Գնա՛ և թող Աստուած օգնական ըլլայ քեզ:

Քօրնէյ պատին կրթնեցաւ և անթացուպին յենած անոր վրայ սեւեռեց աչքերը: Բայց զարմացումով զգաց որ այլեւս մնացած չէր այն բարձկութիւնը, զոր այնքան երկար տարիներ զգացած էր իր ներսիդին: Տեսակ մը տկարութիւն՝ յուզում եկած էր վրան:

— Մարփա՛, դուն ալ պիտի մեռնիս:

— Գնա՛, օ՛ն. Տէր ընդ ձեզ, ըստ արագաւար և բարկութեամբ:

— Ուրիշ ըսելիք չունի՞ս ինծի:

— Բան մը չունիմ քեզի ըսելիք: Գնա՛. Տէր ընդ քեզ: Քեզի պէս ծոյլ շատ կայ:

Մրագ քայլերով մնակը մտաւ և դուռը երեսին գոցեց ուժով մը:

— Ինչո՞ւ կը նախատես, պոռաց էրիկ մարդու ձայն մը, և զուռնէն գուրս ելաւ տապարը մէջքին սեահեր շինական մը, ճիշտ ինչպէս որ էր Քօրնէյ քառասուն տարի առաջ, միայն թէ սա աւելի փոքր ու նիհար թէե, բայց միեւնոյն շատ փայլուն սև աչքերով:

Թէտքան էր ան՝ որուն բերած էր տասնեկօթ տարի առաջ պատկերներու դիրք մը: Անիկա էր

որ մօրը կը նեղանար մուրացիկին ողորմած չըլլաւ-  
լուն համար :

Անոր հետ դուրս ելաւ նաև տապարը մէջ-  
քին համր քեռորդին : Ան ալ տարիքոտ մարդ մը  
դարձած էր դէմքը խորշոմած , ցանցառ մօրուքով .  
երկարավիզ ու թափանցով սուր նայուածքով :  
երկու շինականները ճաշած ըլլալով անտառ կ'եր-  
թային :

— Կեցի՛ր, Մեծ-Հա՛յր, ըստւ, Ֆէտկա և նախ  
ծերուկը մատնանշելով , համրին նշանացի ցցուց  
սենեակը և ձեռքերովվ շերտ մը հաց կարելու  
շարժուձեւն ըրաւ :

Ֆէտկա ճամբուն վրայ ելաւ , իսկ համրը ար-  
նակ վերադարձաւ : Քօրնէյ տակաւին գլուխը  
կախ անթացուպին յենած՝ և պատին կրթնած կը  
մնար : Զափաղանց տկար կը զգար ինքզինքը և  
դժուարութեամբ կը բռնէր լացը : Համրը դուրս  
ելաւ տնակէն սե՝ թարմ հացի խոշոր շերտ մը ի  
ձեռին և Քօրնէյի երկնցուց :

Քօրնէյ նախ խաչակինքեց և յետոյ առաւ հա-  
ցը . համրը տնակին դրան կողմը դառնալով անանկ  
ձեւեր մըրաւ , որով հասկցնել կ'ուզէր թէ մօրա-  
քըրովը ընթացքին չէր հաւած : Յանկարծ շփոթե-  
ցաւ սակայն , և բերանաբաց մօտեցաւ Քօրնէյի  
կարծես թէ ճանչցած էր զանի :

Քօրնէյ այլեւս չկրնալով զսպել իր արցունք-  
ները , վերաբկուին քղանցքովը սկսաւ աչքերը՝  
քիթը և ձերմակ մօրուքը սրբել և կունակը դար-  
ձնելով համրին , վերնագաւթակէն վար իջաւ :

Այս մարդերուն առջեւ , կնոջը առջեւ , իր

տղուն առջեւ , ամէնուն առջեւ ստորնացումի՝ գոհու-  
նակութեան՝ խանդաղատանքի խառն զգացում մ'էր  
ունեցածը , ի՞նչ որ իրեն ուրախութիւն ու միան-  
գամայն ցաւ պատճառելով իր հոգին կ'արիւնոտէր :

Մարֆա՝ պատուհանէն կը դիտէր և մինչեւ որ  
ծերունին չհեռացաւ չգնաց , չկրցաւ հանգիստ  
շունջ առնել :

Երբոք Մարֆա համոզուեցաւ որ ծերունին  
մեկնած էր այլեւս , սկսաւ իր գործին և հիւսել :  
Շատ կը ջանար , բայց ձեռքերը յառաջ չէին եր-  
թար : Պահ մը դադրեցաւ և սկսաւ խորհիլ Քօր-  
նէյի վրայ ինչ վիճակի մէջ որ տեսած էր քիչ ա-  
ռաջ : Ճանչցած էր ան մարդը՝ որ ատենօք գէշ  
վարուած ու սիրած ալ էր զինքը . սոսկումով հա-  
մակուեցաւ իր քիչ առաջուան ընթացքը մուարե-  
րելով : Պարտաւորութիւնը չէր կատարած : Բայց  
ի՞նչպէս . կարելի է՞ր ընդունիլ : Քօրնէյը ըլլալը և  
թէ տուն վերադառնալը չէր ըսած ...

Ու կրկին սկսելով գործին մինչեւ իրկուն հիւսեց :

## Ե.

Շատ նեղութեամբ՝ իրիկուան դէմ Քօրնէյ  
հասաւ Անտրէիէվքա և նորէն Զինօվիէվենց աս-  
պլնջականութիւնը խնդրեց գիշերուան համար :

Հիւրընկալեցին զանի :

— Է՞ն , հայրի՛կ , չկրցա՞ր քալել :

— Ո՞չ , շատ տկար եմ : Արդարեւ վերադառ-  
նալու եմ : Այս գիշեր կը թողո՞ւք որ հոս անցնեմ :

— Հրամմէ՛, չորցո՛ւր վրադ :  
Ամբողջ գիշերը, Քօրնէյ տենդէ տառապեցաւ : Առառուան դէմ քիչ մը հանդստանալով, երբոր արթնցաւ, տան բոլոր մարդիկը իրենց աշխատանքին գացած էին, տնակին մէջ մինակ Սկաֆիան կար :

Թոնիրին վերեւ փոռւած չոր վերաբկուին վրայ տարածուած էր ինքը : Ակաֆիա փուռէն հացերը կը հանէր :

— Աղջիկս, կանչեց անոր տկար այլ քաղցր ձայնով մը, հոս եկո՞ւր :

— Հիմակ, հայրի՛կ, պատասխանեց հացը քաշելով : Բան մը խմել կ'ուզե՞ս . օդի՞ :

Պատասխանեց :

Ակաֆիա երբոր վերջին հացն ալ հանեց փուռէն, պղտիկ ամանով մը օդի ալ առած մօտեցաւ ծերունիին, որն որ բնաւ տեղէն չչարժեցաւ և խմելիքն ալ չառաւ, այլ կոնակի վրայ պառկած ու գլուխը վեր սկսաւ խօսիլ այսպէս, առանց դիրքը փոխելու :

— Կաֆիա՛, ժամս հասած է, մեռնելու կը պատրաստուիմ : Յանուն Քրիստոսի ներէ՛ ուրեմն ինծի :

— Աստուած ներէ՛ : Բայց ի՞նչ բանի համար . դուն ինծի չարիք ըրած չես :

Լուռ կը մնար :

— Եւ յետոյ նաև . . . զաւա՛կս . . . : Մօրդ գնա՛ և ըսէ անոր . . . : Ուզեւորը . . . ըսէ անոր . . . երէկուան ուղեւորը . . . :

Սկսաւ հեծկլտալ :

— Մերոնց գացած ե՞ս ուրեմն :

— Ա՛յո, ըսէ անոր թէ երէկուան ուղեւորը . . . ուղեւորը . . . ըսէ . . . : (Հեծկլտուքները կրկին ար-

գելք եղան : Վերջապէս ուժաւորուելով, աւարտեց) իրմէ հրաժեշտ առնելու համար եկած էր . . . :

Եւ սկսաւ կուրծքին վրայ վնասուելու :

— Պիտի ըսեմ՝, հայրի՛կ, պիտի ըսեմ: Ի՞նչ է վնասուածդդ սակայն :

Ծերունին առանց պատասխանելու, բոլորովին գալարուն ձիգով մը, իր մազոս ու վտիտ ձեռքին մէջ առաւ թուղթ մը և անոր երկնցուց :

— Եւ ասիկա, կը տեսնես . . . առուր . . . եթէ հարցնեն քեզի . . . : Զինուորի տոմսակս է: Փա՛ռք Աստուծոյ բոլոր մեղքերը քաւուած են . . . :

Անոր դէմքը հանդիսաւոր արտայայտութիւն մ'առաւ: Յօնքերը վեր բարձրացան և աչքերն ալ ձեղունին սեւեռած :

— Մ'ո՛մ մը . մրմնջեց առանց շրթունքը երերցընելու :

Ակաֆիա հասկցաւ: Արբոց պատկերներուն առջեւէն մոմ մ'առնելով վառեց և անոր յանձնեց: Ծերունին իր կոշտ մատերուն մէջ առաւ մոմը :

Ակաֆիա՝ տոմսակը մնառուկին մէջ պահելու գնաց և երբ վերադարձաւ անոր մօտ, տեսաւ որ մոմը ձեռքին մէջ չէր այլես, աչքերը արդէն սեւեռուն՝ չէին տեսներ այլես և կուրծքն ալ անշարժ էր:

Ակաֆիա խաչակնքեց, մարեց մոմը, և մաքուր անձեռոցով մը ծածկեց մեռեալին դէմքը :

\* \*

Այն գիշերն ամբողջ, Մարփա չէր կրցած քնանալ . միշտ Քօրնէյի վրայ կը խորհէր: Առառուն մուշտակը հագաւ, գլուխն ալ պերոզով ծածկելէ ետք գուրս ելաւ իմանալու համար թէ՛ ո՛ւր գա-

ցած էր երէկուան ուղեւորը : Անմիջապէս իմացաւ որ ծերունին Անտրէիէվքա գացած էր :


Մարֆա գաւաղան մ'առնելով դէպի Անտրէ-իէվքա մեկնեցաւ : Քանի կը մօտենար, այնքան աւելի կը վրդովուէր : «Պիտի ողջունեմ անոր : Տուն պիտի բերենք և մեղքը պիտի քաւենք դունէ տունը՝ իր տղին մօտ թող մեռնի» կը մտածէր :

Աղջկանը տունը հասնելուն, Մարֆա մարդե-րու բազմութիւն մը նշմարեց հօն : Ոժանք գաւի-թըն էին, ոմանք պատուհաններու տակ : Ամէնքն ալ արդէն խսկ գիտէին թէ ան հարուստ Քօրնէյ Վասիլիէֆը, որ ամէնուն ծանօթ էր գաւառին մէջ քառսուն տարի առաջ, խեղճ ուղեւորի մը պէս մնուած էր իր աղջկանը տան մէջ :

Տնակին մէջն ալ բազմութիւնը լեցուն էր : Կիները կը փախսալին, կը հառաչէին, «ա՛հ»երով կը կոծէին :

Երբոր Մարֆա սենեակէն ներս մտաւ, ճամ-բայ տուին որ անցնի, և Մարֆա՝ սրբոց պատ-կերներուն առջե անոր մարմինը լուացուած և պատատուած տեսաւ, որուն մօտ Ֆիլիք Քօնոնի-չը՝ սլաւերէն լեզուով աղօթքներ կը սազմոսերգէր սարկաւագի մը պէս :

Շատ ուշ էր ներելու կամ ներողութիւն խընդ-րելու համար : Եւ ծերունիին ալ խիստ և վեհա-գառ դէմքը տեսնելով կարելի չէր հասկնալ թէ ինքը ներած էր կամ ոչ :



ԱՆԴՐԱՆԻԿ Մ. ԿԵՆՃԵԱՆԻ կողմէ

ՀՐԱՏԱՎՈՒԹՅՈՒՆ

1. — ՕՊԵՐԱԿԵՆԵՐԸ կամ ԱԼՉԱՍՑԻ ԸՆՏԱՆԻՔ  
ՄԸ. — Հայրենասիրական քատերա- դր.  
խաղ. Թարգմ. 5
2. — ՔՈՐՆԵՑ ՎԱՍԻԼԻՔՅ. — Վիպակ Լէօն  
Թուրքոյէ. Թարգմ. 1

ՀԵՑԶԱՇՏԻ ՀՐԱՏԱՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԱՍՑ  
ԹԱՐԳԱՄՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

3. — Քամիլլ Ֆլամարիոն. — ԱՍՏՎԱՉԱՐԴ ԵՐԱՉՆԵՐ  
(Գիտական վիպակ)
4. — Ժիւլ Բաես. — ԿԱՄՔԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ.՝  
(32րդ տպագրութեան արժանացած լուրջ  
գործ, որ եւրոպական շատ մը լեզուներու ալ  
թարգմանուած է):
5. — Տօրփ. Կիւրավ Լը Պօն. — ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ Թ-  
ՐԵՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՅԵՂԱՇՐՋՈՒՄԻՆ
6. — Մօրիս Մերկելին. — ԼԻՌԻԹԻԽՆԸ

ՀԵԳԻՆԱՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ

7. — ԱՆՁՆԱՁՈՀ Ա.Պ.ՁԻԿԻ Հայկեանի: Բաղուած  
8. — ԶԱՏՈՒԿԻ բարացուցական բա-  
տերախաղեր

4365-

24540

24541

24542

24543

24544

ՀՀ Ազգային գրադարան



NL0652624

ՀՀ Ազգային գրադարան



NL0652623

ՀՀ Ազգային գրադարան



NL0652627

ՀՀ Ազգային գրադարան



NL0652621

ՀՀ Ազգային գրադարան



NL0652628

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0652625

ՀՀ Ազգային գրադարան



NL0652619



